


ՄԱՆՐԱՎԱՃԱՌ

Կրկին զանգակ, եւ ճայնողը չարժուում է առաջ, տանելով հետը իր այդ ճարտասանական բացականչութիւնների հանելուկը:

Մի այլ տեղ բարձր պոռում է մի ուրիշը, երեւի յանճնարարելով իր ձեռքը բռնած գիրքը. միւս կողմը մի մարդ անդադար զանգահարում է, անցորդների ուշքը իր ապրանքի վրա դարձնելու համար:

Քիչ հեռուն լսւում է յանկարծ մելամաղձոտ մի սուլոց. եւ երեւուում է մի կոյրի կերպարանք, յենած իր գաւազանին,